11 ռուբլի 80 կոպեկ մեկնաբանության համար

հեղինակ՝ Անտոն Նոսիկ

Օգոստոսի վերջին Պետերբուրգի բնակիչ Նատալյա Լվովան «վԿոնտակտե» ցանցում նկատել է գովազդ, որ հրավիրում էր երիտասարդներին աշխատանքի Լախտինյան պողոտա 131 հասցեով գտնվող մի ընկերություն։ Դիմողներին խոստանում էին 1180 ռուբլի ութ ժամանոց աշխատանքային օրվա համար, ինչպես նաեւ անվճար սնունդ, հենց գրասենյակում։ Աշխատանքի մասին հստակ չէր խոսվում:

Լվովան այցելեց այդ ընկերություն եւ բացահայտեց այնտեղ հետխորհրդային սեքյուրիթիի ամենահետույքային ձեւերով պաշտպանվող մի գործարան՝ պատվիրված բլոգային հոդվածների եւ մեկնաբանությունների արտադրություն։ Մեկնաբանողի նորման՝ 100 մեկնաբանություն ութ ժամվա ընթացքում։ Կողքի «ցեխում» նույն աշխատավարձով տառապում են «բլոգերները», իրենց բեռն է՝ չորս գրառում մեկ աշխատանքային օրում։ Եւս մի խումբ զբաղվում է սպամով, այսինքն տարածելով այդ ամենը սոցցանցերով եւ ֆորումներով:

Գործարանի այցելության մասին Լվովան գրեց «վԿոնտակտե» ցանցի համայնքում, որից հետո պատվիրված մեկնաբանությունների կոմբինատով հետաքրքրվեց մամուլը։ Որպես աշխատանքի թեկնածու վայրը այցելեցին «Նովայա գազետա» թերթի եւ «Մոյ ռայոն» պետերբուրգյան պորտալի լրագրողները:

Սեպտեմբերի 4ին «Մոյ ռայոն»ում լույս տեսավ Անդրեյ Սոշնիկովի ռեպորտաժը: Այն պատմում էր զարմանահրաշ ֆաբրիկայի հիմնադիրների, իշխանության հետ իրենց կապերի մասին, հստակեցնելով ծառայության տեսակները, որ մատուցում է ընկերությունը։ Տեղական թերթի լրագրողը մեջբերեց ոչ միայն Օլգինոյում ստեղծված պատվիրված մեկնաբանությունների տեքստերը, այլեւ համացանցային հղումներ դրա արտադրանքի օրինակներին՝ արդեն վճարված եւ հրապարակված։ Դժվար չէ կռահել, որ թեման էր՝ «Նավալնին՝ մեր ժամանակի Հիտլերը», բայց կան եւ այլ թեմաներ, ոչ այնքան կանխատեսելի։ Օրինակ, վճարվում է կրթության մասին նոր օրենքին վերաբերող մեծ քանակով դրական եւ բացասական արձագանքների համար։ Խնդիրը հավանաբար այն է, որ Մոսկվայում «ազնիվ ընտրություններից» հետո լսարանին տրամադրել օրենսդրական նախաձեռնությունների «համացանցում լայնածավալ քննարկում», դրանք

ընդունելուց առաջ։ Առանձին պատվերներով ընկերությունը փիառում էր ՍանկտՊետերբուրգում G20ի կազմակերպման բարձր մակարդակը եւ ամերիկյան սինեմատոգրաֆի հիմարությունը, որն արտացոլում է ԱՄՆ բնակչության հիմարությունը։ Ով էր հանդիսանում այդ գրառումների պատվիրատուն Օլգինոյում կարճաժամկետ գտնվող լրագրողը իմանալ չհաստատեց:

Երեկ այդ նույն ընկերության մասին գրեց «Նովայա Գազետան»: Լրագրողը քիչ ուշադրություն է դարձրել հստակ օրինակներին, իսկ հիպերհղումներ իր տեքստում առհասարակ չկային, սակայն նա մանրամասնորեն նկարագրել է գրասենյակի ներքին կարգը, թվարկված են ստորաբաժանումները, որոնց անունները արտացոլում են ֆաբրիկայի աշխատանքի զանազան ուղղությունները, լավ է փոխանցված ղեկավարության զգոն եւ նյարդայնացված լինելու մթնոլորտը։ Պատրանքներ ոչ մեկ չունի։ Բոլորը հասկանում են, որ նման գործունեությունը ցանկացած քաղաքակիրթ հասարակությունում պատժելի է մի շարք հոդվածներով, իսկ Ռուսաստանում կարող է ծառայել քաղաքացիական հայցերի առարկա (Ռուսաստանում քրեական պատասխանատվության ամենահայտնի դեպքն է՝ Սավա Տերենտյեւին քրեական պատասխանատվության բերելը ԿՄի մեկնաբանության համար): Իսկ ովքեր Կրիստինա Պոտուպչիկի պես համոզված են, որ Պուտինի կյանքի օրոք ոչ մեկ այդ նկարչության համար պատասխան չի տալու, միեւնույն է հասկանում են, որ աշխատանքն այդ ամոթալի է, ու ավելի լավ է, շրջապատը չիմանա, որ իրենք այդ *ոզական արհեստով են իրենց գարեջրի փողն աշխատում… Վաղուց եւ ոչ մենք ենք նկատել, ինչ խեղճ է նա, ում խիղճը մաքուր չէ:

Տեսականորեն, ոչ մի սենսացիա էլ չկա։ Այն մասին, որ որոշակի ուղղվածության մեծ քանակությամբ գրառումներ եւ մեկնաբանություններ գրվում են փողով, այդ թվում՝ մշտական աշխատավարձով ապրող գերմանամկների աշխատուժով, վաղուց հայտնի է ռուսական բլոգոսֆերայի բնակիչներին։ Նույնիսկ առանց փաստերին տիրապետելու եւ առանց Կրիստինա Պոտուպչիկի փոստի մասին ֆինանսական հաշվետվություններ կարդալու, ցանկացած բանական մարդ կարող է հասկանալ, թե ինչ զանգվածի գործունեություն է դա, ըստ միատեսակ մեկնաբանությունների, որոնք վերջին ամիսներին շատացել են ԿՄռում։ Բայց պատկերացնել այն միջավայրը, ուր աշխատում են անտեսանելի ֆրոնտի այդ բոլոր զինվորները՝ օգտակար է։ Իսկ ամենակարեւորը՝ եկել է ժամանակը վերանայել այն հնացած պատկերացումը, թե ինչպես է ամոթալի աշխատանքը վճարվում։ Շատերը խոսում են մեկ պատվիրված մեկնաբանության համար 85 ռուբլու մասին, քանի որ այդ թիվն էր բերվել Կրիստինա Պոտուպչիկին իր պատվիրատատուների կողմից։ Բայց, ըստ էության, դա արդեն այն ժամանակ չէր համապատասխանում իրականությանը, քանի որ 85 ռուբլի ստանում էր ոչ թե մեկնաբանության հեղինակը, այլ միջնորդը, ով ինքնարժեքին ավելացնում էր սեփական շահույթը։ Նատալյա Լվովայի եւ լրագրողների շնորհիվ այսօր մենք կարող ենք ճշգրտությամբ արձանագրել. օլգինյան ֆաբրիկայի կատարածուն ԿՄռում իր ամեն մի քաքի համար ստանում է 11 ռուբլի 80 կոպեկ։ Եթե որոշ մոսկովյան պատվիրատուները հնի պես

վճարում են պիտերյան գործատուներին նույն քաքի համար 85 ռուբլի, դա միայն նշանակում է, որ միջնորդի շահույթը կազմում է 631%: Անհնար պատմություն բիզնեսի, բայց նորմալ գործառույթ բյուջետային միջոցների յուրացման համար:

Մեզ, իհարկե, կուզեն պատմել, որ իշխանական գողերը չունեն բլոգերում եւ ֆորումներում վճարովի սպամի մոնոպոլիա: Իբր թե առկա իշխանության քննադատներն էլ են օգտվում նմանատիպ ֆաբրիկաների ծառայություններից: Ավաղ, «ինքդ ես հիմար / գողին բռնեք» բանակռվի ձեւը, ինչքան էլ լավ է գործում «բազար»ում, իրեն չի արդարացնում համացանցում: Այստեղ նման պնդումները պահանջվում է ապացուցել փաստագրական ձեւերով: Բայց ինչքան էլ չկոտրեն Նավալնու փոստարկղը, չգաղտնալսեն մեր հեռախոսային զրույցները, եւ չզննեն մեր էլեկտրոնային դրամապանակները, սպամի կամ բոտնետների կիրառության, վճարված մեկնաբանությունների թեզի ոչ մի ապացույց մատուցված չի եղել: Եւ ցանկացած մարդ, ով քիչ թե շատ հասկանում է ինտերնետից, հեշտ կմեկնաբանի այդ ասիմետրիկությունը ինքնուրույն:

Բանն այն է, որ գանձարանագող չինովնիկների, իրենց արտասահմանյան ակտիվների մերկացումը, գողության մեխանիզմների, ու առհասարակ ցանկացած իշխանության կողմից թաքցրած ճշմարտությունը՝ վիրուսային բովանդակություն է, որն ունի ցանցում ինքնուրույն տարածվելու ահռելի պոտենցիալ: Այդպիսի բովանդակությունը ցանկացած երկրում է տարածվում, իսկ առավել պահանջարկ ունի այն պայմաններում, երբ ֆեդերալ հեռուստաալիքներում եւ այլ զանգվածային լրատվամիջոցներում խստորեն արգելված է իշխանության եւ ուժայինների կոռուպցիայի քննարկումը: Զգալի չափով իշխանությունը այդ պահանջարկը ինքն է ստեղծում, արգելելով առկա խնդիրների քննարկումը: Իսկ հարյուր հինգերորդ քաքի էպիզոդը Նավալնու մասին, ով գողացել է անտառը, եւ ՊետԴեպից ստացած գումարով դարձել է Հիտլեր, ոչ մեկին հետաքրքիր չէ, ներառյալ նրանց, ով այդ աղբը տարածում է համացանցում: Այդ իսկ պատճառով այն կարող է տարածվել միայն փողով: Այդ նույն 11 ռուբլի 80 կոպեկով: Ու այդ աղբի որակը արտացոլում է մեր պետական պրոպագանդայի որակը:

Եթե իշխանությանը աջակցող «լռող մեծամասնության» մասին միֆը իրականության հետ որեւէ առնչություն ունենար, ապա Մոսկվայում, ուր համացանցին կպած է մեծահասակների 80%ը, կամ Եկատերինբուրգում, ուր ինտերնետ ունեն ընտանիքների 80.4%ը, հնարավոր կլիներ գտնել այդ հասարակական աջակցության որոշակի վկայություններ: Բայց տարիներն անցնում են, իսկ վկայություններ չենք տեսնում: Եւ իշխանությունը նույնպես չի տեսնում: Այդ պատճառով եւ դատապարտված է անընդհատ վճարել իրենց աջակցող սպամի համար: Որի գործնական օգուտը, ինչպես տեսնում ենք, մեծ չէ: Նավալնուն մերկացնելու եւ եթեր չթողնելու բոլոր մարմնավարժությունները նպաստում են իր ճանաչելիությանը, եւ ռեյտինգների բարձրացմանը, ինչ էլ չպնդեն արքունական

աստղաբաշխները։ Բայց նրանց համար, ով պրոպագանդայի համար հատկացված բյուջետային փողերն է սղոցում, դա կարեւոր չէ։ Բանաձեւը շատ պարզ է։ Եթե Կրիստինա Պոտուպչիկը վճարում էր 85 ռուբլի 11.8 ինքնարժեքով գրառման համար, ապա այդ 630% օգուտը նստում էր միայն իր պիտերյան գործակցի գրպաններում։ Պատճառ չկա մտածելու, որ Կրիստինան սեւ դրամարկղի վրա, միայն արվեստի հանդեպ համակրանք ունենալու պատճառով։ Հաջորդ 630%ը աշխարհ էր գալիս մոսկովյան պատվիրատուին ներկայացվող հաշվի մեջ։ Այդպես, եթե ենթադրել, որ Սուրկովից մինչեւ «Օլգինո» կայանի գերմանամուկը առկա էին միայն երկու միջնորդ, ապա պետ. բյուջեի վրա ԿՄ-ում այդ մի քաքիկը նստում էր արդեն 850 ռուբլի։ Այդ չհաշված փողերի եւ դրանք սղոցելու մեջ կայանում է հիմնական եւ միակ համացանցային իշխանական քարոզչության իմաստը:

Ավաղ, մենք այսօր չենք կարող խոչընդոտել պետությանը ծախսել այդ անիմաստ կարիքների համար այդ բոլոր հասարակական միջոցները, որոնց պակասը այդքան զգացվում է առողջապահության, կրթության, սոցիալական պարտավորվածությունների, կամ մշակույթային օբյեկտների դեպքում։ Միակ բանը, ինչ մենք կարող ենք (եւ ըստ իս՝ պետք է) անենք՝ մաքրել անձնական տարածքը Օլգինյան ֆաբրիկայի թունավոր նյութերից։ Մեկ միավոր սպամը ԿՄ-ի մեկնաբանություններում մաքրելու, ներառյալ մեկնաբանողին «բան» անելու վրա անհրաժեշտ է հատկացնել ոչ շատ, քան հինգ վայրկյան։ Մեզնից ամեն մեկը մի րոպեում կարող է ավելի շատ քաք մաքրել իր բլոգից, քան սպամերը արտադրում է երկու ժամվա ընթացքում։ Ձեռքի հակասպամերական աշխատանքի արտադրողականությունը 120 անգամ ավելի բարձր է, քան պետական սպամերական արտադրողականությունը։ Իսկ ԿՄ-ում կա նաեւ այդպիսի հիանալի հնարավորություն՝ մեկնաբանությունների խմբային հեռացում:

Ու ինչպես սովորաբար, սեփական տարածքի մաքրման այդ օգտակար աշխատանքը կատարելով, մենք օգնում ենք ոչ թե ինչոր պայմանական Նավալնուն, այլ ինքներս մեզ։ Քանի որ անկախ մատյաններում քաքող օլգինյան քաղաքական սպամից տուժում են ոչ թե նրանք, ում դեմ է ուղղված այդ քաքը, այլ նախ եւ առաջ մատյանների տերերն ու իրենց ընթերցողները:

Նույնիսկ Պոտուպչիկի ֆինանսական հաշվետվությունների հետ ծանոթանալուց տարիներ հետո, ես ալարում էի մաքրել մատյանիս մեկնաբանությունները։ Բայց երբ ես հայտարարեցի այս ԿՄ-ում «լռության օր», իսկ պորտյանկաները հավեսով եւ ուրախությամբ հավաքվեցին, որ այն խախտեն, օգտվելով իմ միամտությունից, ապա նկատեցին, որ իրենց մեկնաբանությունները թաքնված են, իսկ վիրտուալները բան են արվում։ Քանի որ նույնիսկ իմ անհատակ համբերությանը կա սահման, եւ այն, կարծես թե լցվեց:

Ինչպես միշտ, ես ուրախ եմ իմ տեսակետներին(սարքերից մինչեւ Սիրիայի պատերազմ) անհամաձայնության ցանկացած ձեւի հետ: Կոչ չեմ անում ինձ հետ միայն համաձայնել, որ ես ինձ միայնակ չզգամ ինքս իմ կարծիքի հետ: Բայց աշխատավոր վիրտուալները, որ աղտոտում են քսերոքսով, ընկերական շարքով ուղարկվում են երեք հայտնի տառի կողմ, թմբուկի ձայնի ներքո:

Ցտեսություն, այստեղ ձեզ ուրախ չեն: